ղովուրդը, որք շատ ու շատ զրհողութեանց և զրկմանց ենթարկուած են, անշուշտ՝ անձեռնհաս բարձրագոյն իշխանութեանց դէմ մաքառելու, իրենց համբերատար հովուին դէմ ըմբոստացել են, որ աշխատած է միշտ կատարել ժողովրդեան կամքը. խօսքիս մեծամեծ ապացոյց մի է Հայոց կաթողիկաց վերադարձն 'ի խալոսու: Երբ տասնուերկու տարի անցնելէն վերջը դարձեալ կու գան Հայք 'ի Ղրիմ, և քաղաքանդ կը գտնեն աշխարհքը, և երբ կը յիշեն որ յեկատերինեսլաւ հազարաւոր տեսեատինի հողեր, զոր տէրութիւնն ձրիաբար իրենց պարգևել էր, և իրենք կարող չեղան շահուիլ, անշուշտ դարձեալ ոչ սակաւ դանգատ և տրտունջ հասուցել են Տէր Յակոբու ականջը. արդեօք տրտունջ միայն. անտարակոյս նա ժամանակին յորդորած է ժողովուրդը որ մնան յեկատերինեսլաւ, և աշխատին արդիւնաւորել իրենց տրուած հողը. այլ ռամիկ ժողովուրդն միշտ անցեալը կը յիշէ և այդ պատճառաւ շատ անգամ իւր ներկայն և ապագայն կը թշուառացընէ: Եթէ խարասուցի հայ կաթոլիկ ժողովուրդն մնար յեկատերինեսլաւ, որ այժմ մեծ և փառաւոր քաղաք է, և գիտնար արդիւնաւորել իրեն տրուած հողը, այսօր մեծամեծ հարուստ վաճառականներ պիտի լինէին Հայք, և պիտի ունենային իրենց ձեռքը ցորենաբեր դաշտեր:

Սակայն ըստ օրինակի ռամիկ մարդկան, աւելորդ է անցելոյն վրայ ափսոսալը. այժմ ևս եթէ Հայք չափաւորեալ կենօք շատանալով, աւելի աշխատասիրութեամբ գործեն, դարձեալ իրենց հանգիստ ներկային՝ լաւագոյն ապագայ պիտի կարենան պատրաստել իրենց սերնդոց:

Շարունակելի

Հ. Քերովբէ Վ. Քուշներեան

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆԱՑ

### ՅԸՆԹԱՑՍ 1886 ԱՄԻՆ

Աշխարհագրութեան (քաղաքական) ընթացք, 'ի պէտս ազգային վարժարանաց: Գործ Յարութիւն Յ. Պէյազեանի: Կ. Պոլիս, Պաղտատլեան (Արամեան) տպարան, 1886:

Ապուշը. — Գրեց Արփիար Արփիարեան (Հրազդան): Կ. Պոլիս, 'ի տպ. Արևելք լրագրի, 1886:

Առակագիրք. ինքնագիր և թարգմանածոյ առակներ և երգեր, ժողովրդական լեզուով գրուած, Ա. Բահաթրեանց, 1886:

Առաջին գիրք գաղղիարէնէ 'ի հայ. թարգմանեաց Ռ. Պէրպէրեան. Կ. Պոլիս, 1886:

Առաջնորդ թարգմանութեան գաղղիարէն լեզուի, 'ի պէտս նախնական դասուց ազգային վարժարանաց: Աշխատասիրեաց Խ. Սիմոնեան: Կ. Պոլիս, 'ի տպ. Ն. Պէրպէրեան, 1886:

Առաջնորդ իտալական լեզուի, համանդերձ օգտակար խօսակցութեամբք և կարևոր տեղեկութեամբք 'ի պէտս ազգային վարժարանաց և զարգացեալ դասուց: Յօրինեաց Յովսէփ Գոնթ Պէյ: Նոր մեթոտով պատրաստեալ: Կ. Պոլիս, տպագրութիւն Փ. Պաղտատլեան (Արամեան), 1886:

Առաջնորդ ընթերցանութեան օսմանեան լեզուի: — Ռամից դասատուի երկու օրէն ուսանելի: Գրեց Մ. Արինեան: Կ. Պոլիս, 1886:

Առողջապահութիւն երիտասարդութեան. թարգմ. 'ի գերմանականէն Մ.

digitised by A.R.A.R.@

Կ. Նազիկեան, Կոստանդնուպոլիս, 1886։

Աստղաբաշխութեան տարերք աղջկանց դպրոցներու համար. ազատ թարգմանութիւն 'ի Մ. Մամուրեանէ։ Զմիւռնիա, 1886։

Արարիչ կամ փորձուհին. վիպասանութիւն. հեղինակութիւն Սրբուհի Տիւսաբ։ Կ. Պոլիս, տպ. Արամեան. 1886։

Արբեցողի մահը. վիպասանութիւն Զարլզ Դիկկէնսի. թարգմանութիւն Յովսէփայ Եուսուֆեան։ Թիֆլիզ, տպ. Մ. Ռոտինեանց, 1885։

Արդի ժամանակաց ռուսք. բանախօսութիւն 'ի Պատ. Մանկասար Մանկասարեանէ, Կ. Պոլիս, 1886։

Բաբախումնական. Ուխտաւորի յիշատակարանը։ Շուշի, Միրզաջան Մահտեսի Յակոբեանցի տպարանում, 1885։

Բառագիտութիւն կամ ութ մասունք բանի հայերէն քերականութեան. Եղիշէ վարդապետի Գուրեան։ Կ. Պոլիս, Արամեան տպագրութիւն, 1886։

Բառարան Գաղղիարէն, Հայերէն, Տաճկերէն։ Աշխատասիրեաց Հ. Սամուէլ Վ. Գանթարեան 'ի Մխիթարեան ուխտէն։ Վենետիկ. Ս. Ղազար, 1886։

Բարեկարգութիւնք այսպէս պէտք է, և Ջոն Տեններ. յօգուտ մի չքաւոր ուսանողի։ Շուշի, Պետրոս Տէր-Յովհաննէսեան, 1886։

Բարոյագիտութիւն (համառօտ)։ Գործ վանահօր Սուրբ Կարապետի վանաց Երնջակու՝ Սերովբէ եպիսկոպոսի Արարատեան, միաբանի մայր Աթոռոյ Վաղարշապատ, 'ի տպ. կաթուղիկէ Ս. Էջմիածնի, 1886։

Բերտէ. Կեսար և Աստուած. քարոզչերք. Թարգմ. Ֆրանսերէնից Աբգար Յովհաննիսեան. Թիֆլիզ, 1885։

Բնագիտութիւն (համառօտ) 'ի պէտս ազգային վարժարանաց։ Աշխատասիրեաց Մ. Մօզեան։ (Տիկին Բաք Քարբանթիէ երեկի մանկավարժուհւոյն հետևողութեամբ)։ Կ. Պոլիս, 'ի տպ. Ն. Պէրպէրեան, 1886։

Բնական պատմութիւն. (Հատ. Ա). կենդանային հիւսուածաբանութիւն և Մարդկային կազմախօսութիւն։ Շարագրեց Ն. Տաղաւարեան։ Կ. Պոլիս, տպ. Արամեան, 1886։

Գաղտնիք Ղարաբաղի. – Հեղինակութիւն Ապրեսի Բէկնազարեանց։ Արգեամբք և ծախիւք մեծապատիւ տեառն Առաքել Աղա Ծատուրեան։ Ս. Պետերբուրգ, տպարան Ի. Ն. Սկորոխոդովի. 1886։

Գոհարք Ֆրանսերէն գրականութեան. երկասիրեաց Յակոբ Գ. Էտիլեան. Կ. Պոլիս, 1886։

Գրականական երեկոյ. կատակերգութիւն մէկ արարուածով. Հեղինակութիւն Փառնակեսի։ Թիֆլիզ, տպ. Մովսէս Վարդանեան, 1886։

Գրական բառգիրք Ֆրանսերէնէ 'ի հայերէն. Եղիա Տէմիրճիպաշեան. Կ. Պոլիս, 1886։

Դիւցազունք աշխատութեան. Թարգմանիչ Կ. Յ. Գարակիւլեան։ Հրատարակիչք Ն. Կ. Պէրպէրեան և Յ. Տէօվլէթեան։ Կ. Պոլիս, 'ի տպ. Ն. Կ. Պէրպէրեան, 1886։

Դպրութիւն կամ Զրուցատրական նոր մէթոտ ուսման Ֆրանսական լեզուի, 'ի պէտս վարժարանաց և ինքնընտել ուսանողաց։ Գործ Էմիլ Օդժյէ։ փոխադրեաց 'ի հայ 'ի գերմանացի բնագրէն Եղնիկ Տ. Յովհաննէսեան։ Կ. Պոլիս, Յ. Գավաֆեան գրատուն, 1886։

Եսան Էռնեստ Սմօլեար. թարգմանութիւն Գիւտ քահանայի Աղանեանց։ Թիֆլիզ, 'ի տպ. Մարտիրոսեանց, 1885։

Երեք քաշեր. կոմեդիա մէկ արարուածով. (Հեղինակութիւն Մ. Պէշիքթաշլեան). փոխադրութիւն և հրատարակութիւն Բարսեղ Քամալեանի։ Թիֆլիզ, 1886։

Երկրաչափութիւն տեսական և գործնական, երկրորդական վարժարանաց համար. (Նոր գրութիւն). աշխատասիրեաց Վահան Ս. Հազարապետեան, հետևողութեամբ Ֆ. Տալմէսի։ Կ. Պոլիս, 1886։

Զրկանքի զոհ, գործ Էմին Տէր Գրիգորեանցի. Երևան, 1886։

Էնքրէսեան (Ե). Մարամ թէ Մա-

digitised by A.R.A.R.@

րուխ. բանաստեղծական տետրակ մը որ կը հետազօտէ թէ սրբոյն Յովհ. Մըկրտչի կերածը յանապատին մարախ էր թէ մարուխ։ Կ. Պօլիս, 1886։

Էֆիմէրոս. Երազահան Գրիգորի քահանայի Մանդակունի։ Թիֆլիզ, 1886։

Ընտիր հատուածներ (Քրիստոմատիա), հայ դպրոցների համար։ Ա. Մասն. արձակ։ Բ. Մասն. բանաստեղծութիւններ։ Յօրինեց Յովհաննէս Նազարեանց։ Թիֆլիզ, կրամարէնկոյի տըպարան, 1885։

Թուաբանութիւն նոր և ընդարձակ, տեսական և գործնական, երկհատոր, գործ Ս. Միքայելեանի, Կ. Պօլիս, 1886։

Թուաբանութիւն գործնական. շարագրեց Հ. Անդրէաս Վ. Ճերմակեան, 'ի Մխիթարեան ուխտէն։ Վիէննա, տպ. Մխիթարեանց, 1886։

Իրագիտութիւն 'ի պէտս գեղահաս մանկանց. երկասիրեց Ենովք Թէյեան, Կ. Պօլիս, 1886։

Լէոն տը Թէնսոյ, Թարգմ. Կ. Ս. Իւթիւճեան, Կ. Պօլիս, 1886։

Լուսանման. հին գրոց. գրեց օրիորդ Շուշանիկ Շամքորեանց։ Թիֆլիզ, տպ. Մովսէս Վարդանեան, 1886։

Խաղերգանք հայկական. երաժըշտական խաղեր դաշնակի համար։ Յօրինեց Գենարիոս Ղորղանեանց։ Թիֆլիզ, Բ. Շահվէրդեանի գրախանութ, 1886։

Խորէն (Գերպ. Հայր) Ճայրագոյն վարդապետի գործունէութիւն Ախալցխայում։ Թիֆլիզ, Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարան, 1885։

Խորհուրդք հաւատացելոց. յօրինեց Յակոբ Մատթէոսեան։ Կ. Պօլիս, տպ. Պաղտատլեան (Արամեան), 1886։

Ծաղկաքաղ վարուց Սրբոց և Տօնակատարութիւնք Հայաստանեայց սրբոյ Եկեղեցւոյ։ Աշխատասիրեաց Արիստակէս Եպիսկոպոս Դաւթեան։ Վաղարշապատ, 'ի տպ. սրբոյ Էջմիածնի, 1886։

Կեանքի պատկերներ, Նորավէպք։ Դաստիարակելը։ — Երազի մը գինը։ — Կատակ մը։ Արփիար Արփիարեան. Կ. Պօլիս, 'ի տպ. Արեւելք լրագրի. 1885։

Կեանք և իրք։ Ռ. Պէրպէրեան. Կ. Պօլիս, 1886։

Կենսագրութիւն Մեսրովբայ Դաւթեան Թաղիադեանց Երեւանցւոյ։ Հաւաքեց և խմբագրեց Տէր Յովհաննէս Ք. Մկրեան, Խաչակիր Աւագ Քահանայ Հայոց 'ի Կոստանդնուպոլիս։ Թիֆլիզ, Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարան, 1886։

Կնոջ կոչումը և դաստիարակութիւնը. հեղինակութիւն Լուիզա Բիւխների. թարգմանութիւն Գ. Շահբուդաղեան։ Թիֆլիզ, 'ի տպ. Մովս. Վարդանեան և Ընկ. 1886։

Կողոպտուած եկեղեցի. եղերական վէպ։ Հեղինակութիւն Լումայի. (Սերգէյ Սիմէոնովիչ Նազարով)։ Թիֆլիզ, տպ. Ռօտինեանց, 1886։

Հայոց վանքերը. համառօտ տեսութիւն Կ. Կոստանեանցի։ Մոսկով, 1886։

Կրանդ նաւապետին որդիքը. վիպասանութիւն Ժ. Վէռնը գաղղիացւոյն։ Թարգմ. Կ. Ս. Իւթիւճեան։ Կ. Պօլիս, 'ի տպ. Արեւելք լրագրի. 1885։

Համլէտ. Շէքսպիրի այս անունը կըրող ողբերգութեան կարճառօտ և ամփոփ բովանդակութիւն։ Թարգմանեց 1883 թուին 'ի Մոսկուա տպուած ռուսերէն գրքէ մը Սէյեատ Ամիրեանց։ Հրատարակողն Սմբատ–Բէկ Լալայեանց։ Բագու, 'ի տպ. Մ. Վօլչկինի, 1886։

Հայաստանեայց առաքելական և սուրբ եկեղեցւոյ պատմութիւն. գրեց Յուսիկ Վարդ. Մովսիսեան, Վաղարշապատ. 'ի տպարանի կաթուղիկէ Ս. Էջմիածնի. արտատպած Արարատ ամսագրից, 1886։

Հանրահաշիւ (Ալգեբրա) Տէր Ղուկասեանի և Գ. Մուրատեանի կազմած, և Միքայէլ Պետրոսեան Սափարեանցի հրատարակած։ Թիֆլիզ, 1886, Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարանում։

Հիմնական նոր եղանակ Ֆրանսե-

digitised by A.R.A.R.@

րէն չարագրութեան ։ Յօրինեաց Յ. Թ. Հինդլեան. Կ. Պոլիս 1886 ։

Հիւկոյ Վիքթոր. Թշուառներ. վիպասանութիւն. թարգմանիչ Գրիգոր Չիլինկիրեան. երկրորդ տպագրութիւն պատկերազարդ. Հրատարակիչք Նշան Կ. Պէրպէրեան և Ս. Տէօվլէթեան. Կ. Պոլիս, տպ. Նշան Կ. Պէրպէրեան, 1886 ։

Հոմերի Իլիական, Ֆէրդինանդ Շըմիդթի, արձակ պատմուած. Փ. Վարդանեանի թարգմանութեամբ, պատկերազարդ ։ Թիֆլիզ, կեդրոնական գրավաճառանոց, 1886 ։

Հոմերի Ոդիսական, Ֆէրդինանդ Շմիդթի, արձակ պատմուած. Փ. Վարդանեանի թարգմանութեամբ, պատկերազարդ ։ Թիֆլիզ, կեդրոնական գրավաճառանոց, 1886 ։

Մանկանց բժիշկը կամ առաջնորդ ծնողաց և ստնտուաց, 'ի Տօքթէօր Բ. Մինէճեանէ. Կ. Պոլիս, 1886 ։

Մարմնամարզութեան համառօտ ։ Կ. Պոլիս, 'ի տպ. Նշան Կ. Պէրպէրեան, 1886.

Մեծապատիւ մուրացկաններ ։ Գրեց Յ. Պարոնեան. Կ. Պոլիս 1886 ։

Մոլիէրի Երեւակայական հիւանդ. կատակերգութիւն երեք արարուածով. թարգմանութիւն ֆրանսերէնից Ե. Լալայեանի ։ Թիֆլիզ, 'ի տպ. Մարտիրոսեան, 1886 ։

Նամականի ընկերային, ուղղեալ առ երիտասարդս, Տիմոթէոս Դիտքոմ ամերիկացւոյ, թարգմանչի յառաջաբանով մը և ծանօթութեամբք ։ Կ. Պոլիս, տպ. Արամեան, 1886 ։

Նկարիչ ձայնագրութեան. Թիֆլիզ ։

Նշանագիրք հայերէն և գաղղիերէն, Խ. Մ. Թահտաճեանի ։ Կ. Պոլիս, Յ. Արամեան և ընկ. 1886 ։

Նոր ցաւ. մի հասարակ մարդու յիշողութիւններից. գրեց Սկայորդի ։ Շուշի, 'ի տպ. Միրզաջան մահտեսի Յակոբեան, 1886 ։

Նենգ և Սէր. գրամա հինգ արարուածով և ինն պատկերով. թարգմանութիւն ֆրանսերէնից, (Աղեք. Դիւմայի թարգմանութիւնից) Ե. Լալայեանց ։ Թիֆլիզ, տպարան Մ. Դ. Ռօտինեանց և ընկ. 1886 ։

Շերամապահութեան (կանոնաւոր) համառօտ ձեռնարկ ։ Հրատարակութիւն կովկասու գիւղատնտեսական ընկերութեան. Թիֆլիզ, 1886 ։

Նոր քերական ֆրանսերէն, համդերձ հայերէն բացատրութեամբք, յօրինեց Բ. Մ. Պօղաճեան, 1886 ։

Ոճք. յատկաբանութիւնք, առակք և մասնաւոր գիտելիք Ֆրանսերէն լեզուի ։ Աշխատասիրեաց Յ. Թ. Հինդլեան ։ Կ. Պոլիս, 1886 ։

Ուաշինկթըն (Գէորգ). Ֆերդինանդ Շմիդթի. — Փիլիպպոս Վարդանեանի թարգմանութեամբ ։ Թիֆլիզ, Մարտիրոսեանցի տպարան, 1886 ։

Ուղեցոյց գործնական գինեգործութեան. գրեց Կ. Կ. Մէլիք Շահնազարեանց. պատկերազարդ ։ Թիֆլիզ. տպ. Մ. Վարդանեան, 1886 ։

Ուսումն քրիստոնէական հաւատոյ, պատկերազարդ. յօրինեալ 'ի Սահակ Ա. Խանճեան, Կ. Պոլիս, 1886.

Ուսումն փիլիսոփայութեան կրօնի, 'ի պէտս բարձրագոյն դպրոցաց և ուսումնականաց. ազատ թարգմանեալ 'ի գերմանականէն 'ի ձեռն Հ. Ղեւոնդեայ Վ. Յովհաննեան 'ի Մխիթ. ուխտէն ։ Վիէննա, 'ի տպ. Մխիթարեանց, 1885 ։

Պատմութիւն հայ մատենագրութեան, 'ի վաղ ժամանակաց մինչև մեր օրերն. 'ի պէտս ազգային վարժարանաց. Եղիշէ Վ. Դուրեան ։ Կ. Պոլիս, տպ. Գ. Պաղտատլեան (Արամեան), 1885 ։

Սաղմոս Իսրայէլի. Հրատարակութիւն Մ. Փորթուգալեան ։ Մարսէյլ, 'ի տպ. Արմենիա լրագրի, 1886 ։

Վարդ և Շուշան. Բանաստեղծութիւնք Տիգրան Ս. Շալճեան ։ Կ. Պոլիս, տպ. Նշան Կ. Պէրպէրեան, 1886 ։

Վարք երեւելի սրբոց ։ Միհրան Գ. Մուղեան այս խորագրով սկսած է հրատարակել օգտակար տետրակաց շարք մը ։ Կ. Պոլիս. տպ. Նշան Կ. Պէրպէրեան ։ 1886 ։ Ա. Բարմանթիէ ։ — Բ.

digitised by A.R.A.R.@

Լիվընկօթըն: — Գ. Սթանլէյ: — Դ. Սմէֆէնսըն: — Ե. Միքէլ-Անճէլօ:

Տէր-Աղեքսանդրեանց. Թիֆլիզեցւոց մտաւոր կեանքը: Թիֆլիզ, տպ. Յ. Մարտիրոսեան, 1886:

Տիւ Պուատկոպէ (Ֆօրթիւնէ), վիպասան գաղղիացի: Կէռ Բոլթաման. վիպասանութիւն. Թարգմանեց Կ. Ս. Խաթիւճեան: Կ. Պօլիս: 'ի տպ. Արևելք լրագրի, 1886:

Տօնացոյց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Հրատարակեաց Սահակ Ա. Խանճեան, Կ. Պօլիս, 1886:

Քերականութիւն յունարէն և ընթերցարան, հանդերձ խօսակցութեամբ. յօրինեալ 'ի Տ. Խ. Զօհրաբեանէ: Կ. Պօլիս, տպ. Պաղտատլեան, 1886:

Օնէ (Ժօրժ) վիպասան գաղղիացի. Դարբնոցապետն կամ կենաց պայքարները: Թարգմանիչ Բ. Մ. Պօղաճեան: Հրատարակիչ Յ. Քրիստափորեան. Կ. Պօլիս, 1886:

# ԵՐԳ ՎԱՆԵՑԻՈՑ

Համբարձման երկուշաբթին
Առայ զփոցխն ու զգերընդին.
Ընկայ ծովու ծով յափան.
Ծոռեցի ծորթըփեցի.
Մանրիկ մանրիկ խորմեցի[1].
Բէհան ճիւղով կապեցի,
Տա մէկ բարոլ ճամբեցի:
    Տանէր Նայ Նայ Նայնանայ,
    Ջանէր Նայ Նայ Նայնանայ:
Թորկեր ես երկու ջուխտ ծամ,
Ջուխտ ծամներ, մէկն էր Նըրան.
Կըզայ՝ թէ տեսնեմ Նըշան.
Գըլորայ, ընկայ գըետան:
Հըմլայ[2] գըետան ո՞վ է տեսի.
Մէջ վարդ է, բոլոր ռեհան:
    Տանէր Նայ Նայ Նայնանայ,
    Ջանէր Նայ Նայ Նայնանայ:
Ո՛ր մէկ սուրբեր կանչի՝ չեկան խորասան[3].
Սուրբ Սարգիսն էր խորասան.
Հանեց ու խըրատ տըւեց,
Ձերթաս յալլիկն[4] 'ի կընկան.
Կընիկ՝ սև օձու Նըման:
Կաղնի փէտըն քէօքէ հան,
Ա՛ռ ու ընկի՛ կընկայ ջան:

1 Փունջ կապել:
2 Այս տեսակ:
3 Օգնական:
4 Հաւատ չընծայես:
5 Կծանել:

    Տանէր Նայ Նայ Նայնանայ,
    Ջանէր Նայ Նայ Նայնանայ:
Գացի դըռնիկ կխսաբայ,
Մըտայ՝ թ'առնեմ թամայ հաց.
Անտէր չընկի մընացած,
Ընծի բ՛նչ խածնել[5] պիտէր,
Ընծի ժըպխտ մի պիտէր:
    Տանէր Նայ Նայ Նայնանայ,
    Ջանէր Նայ Նայ Նայնանայ:
Տարին տասուերկու ամիս,
Թոռման[6] խընձորն 'ի գոտիս.
Խընձորի կէս խածուկ էր,
Զարս բոլորը արծուկ էր.
Ճամբենք բարոլ տէ՛ արի՛:
    Տանէր Նայ Նայ Նայնանայ,
    Ջանէր Նայ Նայ Նայնանայ:
Ուստէ՞ կու գաս. — Արտէն, կալէն:
— Հագերես վուշ[7], թորկեր վալէն[8],
— Նոր եմ ընկեր սիրու բալէն:
— Ընկեր ես ծով կը լողաս,
Քընց[10] Նըռան հատ կը շողաս:
    Տանէր Նայ Նայ Նայնանայ,
    Ջանէր Նայ Նայ Նայնանայ:

6 Թառամել:
7 Հագուստ բամբակեայ:
8 Հագուստ մետաքսեայ:
9 Ցաւ, կրակ:
10 Քանց, քան զնուան, և այլն:

digitised by A.R.A.R.@